

## «ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ» ՍՐԲԱՎԱՅՐԻ ԷՌԻԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԻ

### Ներածություն

#### *Կարեն Հովհաննիսյան*

Ներկայացվելու է «Թուխ Մանուկ» սրբավայրերի մասին հայագիտության մեջ արտահայտված առաջին կարծիքը, որի հեղինակն է հայկական ազգագրության և բանահավաքչության նահապետ Գարեգին Սրվանձտյանցը: Այդ կարծիքը կարելի է բաժանել երկու մասի և ամեն մի մասին առանձին անրադառնալ, օգտագործելով ոչ միայն Սրվանձտյանցին հաջորդող մյուս հավաքողների (Րաֆֆի, Վահան վարդապետ Տեր-Մինասյան, Մ. Միրախորյան, Պ. Պռոշյան և ուրիշներ), այլև սեփական դաշտային ազգագրական նյութերը:

Հարկ է նշել, որ Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցի մոտեցումը ամբողջությամբ զերծ է օտար, այդ ժամանակից սկսված և ցարդ շարունակվող արևմտյան գիտական որևէ տեսության ազդեցությունից: Գարեգին եպս. Սրվանձտյանցը, լինելով ոչ միայն բանահավաք, այլև կրող, անկողմնակալ է ներկայացնում իր նյութը և բնագրորեն զգում է նրբերանգները: «Թուխ Մանուկ» սրբավայրերի մասին նրա և նրան անմիջապես շարունակող հայ անվանի բանահավաքների նյութերը ամբողջությամբ հաստատվել են մեր օրերում ՀՀ տարածքում սփռված շուրջ 200 «Թուխ Մանուկ» սրբավայրերի ուսումնասիրության ընթացքում:

#### **Թուխ Մանուկ սրբավայրերի ուսումնասիրության սկզբնավորումը**

Թուխ Մանուկ սրբավայրերի, ինչպես և այլ բազմաթիվ երևույթների մասին առաջին կարծիք հայտնողը Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցն է: Ամբողջությամբ մեջբերենք Թուխ Մանուկ սրբավայրերի մասին նրա հաղորդումն ու կարծիքը իր «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» երկից:

«Հայաստանի մեջ իմ տեսած տեղերը, հազիվ գրեթե կը գտնվի գեղ մը, որ թուխմանուկ չունենա. թեպետ քաղաքներու մեջ ալ կը գտնվին: Ամենափոքրիկ մատուռ մը կամ առանց կավաշաղախի շարված քարերով շենք մը, որո մեջ տղա մ'անգամ չպարունակիր, խաչքար մը, ողջ կամ

կոտրած, կամ գերեզմանաձև շենք մը, և ադոնց մեջ ճրագ ու խնկանոց, ուր կ'երթան բարեպաշտ կանայք և ցավագար կամ փստավոր անձինք ձեթ և մոմ վառելու, խունկ ծխելու, ծունկ դնելով, կուրծք ծեծելով, լալով և պաղատելով իրենց ուխտը կը կատարեն: Թուխ մանուկն այս է: Թե փողոցներու մեջ լինի այն, թե տուններու մեջ և թե այնպիսի տան մը և այգիի մը կամ արտի մը մեջ, զորս հայոցմե առած լինին տաճիկները, այսու ամենայնիվ հայերը ազատ են իրենց սուրբին ուխտի երթալու, սուրբին հրաշքները հոչակելու, որում վկա կը կոչեն զնույն իսկ տաճիկները. և այս ավանդապահությամբ և տաճկաց վկայությամբ՝ թուխ մանուկներեն շատերը շինված են եկեղեցի, ժողովրդանոց, նույն անունը պահելով թուխ մանուկ: Իսկ թե ի՞նչ սկիզբն ունի այդ ավանդությունը: Ինձ կը թվի թե՛ կամ իրոք ս. եկեղեցյաց տեղ են եղել այդ տեղերը զորս բարբարոսությունը քարոքանդ է ըրեր, անհետացրնելու նպատակով Հայոց աշխարհեն քրիստոնեությունը. բայց սրտի տաճարները մնալով կենդանի և անմահ նշանակած են այն տեղերը և որդվոց հորդի ցույց տված ու պաշտած՝ շենքին տեղը և անոր հողն ու քարը նվիրական են պահած: Եվ կամ, հալածանաց դարերու և տարիներու մեջ, սուրբ հավատքի համար նահատակվողներու արյունը թափված կամ անոնց թաղված տեղերն եղած են, զորս նույնպես պաշտելի պահած են: Եւ եթե թուխմանուկ կոչվելուն և անվան ուշադրություն տանք, թերևս լինին դոքա մանուկներ, խվված իրենց մայրերու ձեռքեն, կամ կպած անոնց ստինքին և գրկին մեջ՝ մորթված քրիստոնեության անվան և սիրույն համար, թուխ գույն ստացած բոսորային արյան մեջ թաթախվելով. որոց հիշատակի համար հատուկ պատմություն մը չկա, բաց 'ի այն սրբազան Շարակնոցին, որ է. "Կամաւոր պատարագք, մանկունք տիօք և կատարեալք իմաստութեամբ, որք փոխանակ կաթին արբիք զգինին զմայլեցեցիչ. բարխօւեցեք առ Տէր վասն մանկանց եկեղեցոյ"<sup>1</sup>:

Նախքան Գարեգին եպս. Սրվանձտյանցի այս կարծիքին անրադառնալը, նշեմ, որ «Գրոց ու բրոց» երկին նվիրված իր գրախոսականում Ռաֆֆին հաստատում է Սրվանձտյանցի հայտնածը:

“Թուխ Մանուկ կոչվում են Վասպուրականի կողմերում զանազան նվիրական տեղերը, ուր նշանակյալ օրերում (ըստ մեծի մասի կիրակ-

<sup>1</sup> **Գարեգին եպս.Սրվանձտյանց**, Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Միերի դուռ, Երկեր, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 79-80:

մուտ գիշերներում) ժողովուրդը ճրագներ է վառում, խունկ է ծխում, զանազան խնդրվածքներ անելով: Թուխ Մանուկների վրա շատ տեղ շինված են փոքրիկ մատուռներ և կոչվում են օջախ:

Հայոց Թուխ Մանուկները նույնպես կան զանազան արևելյան ազգերի մեջ: Շատ հավանական է, որ Գ. Սրվանձտյանցի կարծիքը ճիշտ լինի, թե նրանք զանազան ժամանակներում նահատակված, քրիստոնյա մարտիրոսների արյուն թափած տեղերը լինեն: Իսկ շատ անգամ ևս ժողովրդի սնահավատությունը ստեղծում է Թուխ Մանուկները. հանկարծ պառավին մինը այնինչ ավերակի մեջ երազում կամ առաջոք լույս տեսավ, ավեզարդ և ճաճանչավոր գլխով մի ծերունի տեսավ, նա այդ տեսիլը պատմում է ժողովրդին, և իսկույն նրանք ամենայն ջերմեռանդությամբ շարում են այնտեղ իրանց ճրագները և խունկեր են ծխում»<sup>1</sup>:

Այսինքն Րաֆֆին ամբողջապես համաձայնվում է Սրվանձտյանցի հետ և վերջում ևս մեկ փաստ է ավելացնում Թուխ Մանուկ սրբավայրերի ստեղծման մասին՝ այն է երագներն ու տեսիլքները: Սակայն Րաֆֆու կարծիքում կա երկու կետ, որոնք պարզաբանման կարիք ունեն: Նախ աղբյուրներում և մեր դաշտային նյութերում չի հանդիպում տվյալ, որ Թուխ Մանուկ մատուռները կոչվեն օջախ, այդ թվում և Րաֆֆու նշված Վասպուրականում: Երկրորդ՝ Րաֆֆու “հայոց Թուխ Մանուկները նույնպես կան զանազան արևելյան ազգերի մեջ» պնդումն այնքան էլ հասկանալի չէ: Արդյո՞ք նա նկատի ունի անվանումը, սրբավայրի կառուցվածքը, ծիսական համալիրը թե՞ բոլորը միասին: Ինչևէ, միանշանակ կարող ենք ասել, որ “զանազան արևելյան ազգերի մեջ» կան Թուխ Մանուկների և այլ ժողովրդական սրբավայրերի նման սրբավայրեր, որոնք նույնպես մատուռներ, բնական օբյեկտներ, սրբազան առարկաներ են, դրանցում կատարվում են նման որոշ ծեսեր, սակայն Թուխ Մանուկ անունը չկա: Այսինքն որոշակի նմանություն կա կառույցի կամ ծիսական համալիրի որոշ տարրերի միջև, սակայն դրանք Թուխ Մանուկներ չեն:

Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցի գործունեությունը մեծ արձագանք գտավ հայոց մեջ, մտավորականության և հոգևորականության շատ ներկայացուցիչներ սկսեցին նրա օրինակով հավաքել ու գրանցել հայկական ազգագրական և բանահյուսական նյութը: Գրիգոր Խալա-

<sup>1</sup> **Րաֆֆի**, Գրոց ու բրոց կամ Սասունցի Դավիթ, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. 9, Երևան, Հայպետհրատ, էջ 108-109:

թյանցը մի ծրագիր կազմեց, որի նպատակն էր հայ ազգագրական և բանահավաքչական գործընթացն առավել արդյունավետ դարձնելը: Այս Ծրագիրը ձևավորված է Խալաթյանցին ոգեշնչած Սրվանձոյանցին: Խալաթյանցի «Ծրագիր հայ ազգագրության եւ ազգային իրաւաբանական սովորութիւնների» երկում կա հատված, որը վերաբերում է Թուխ Մանուկ սրբավայրերին:

Գր. Խալաթյանցը Թուխ Մանուկներին վերաբերող հարցաշարը զետեղել է «Պասերը. ուխտ և ուխտագնացություն» ենթավերնագրի տակ, և այն ընդհանուր Ծրագրի 253-րդ կետն է. «Ի՞նչ է Թուխ Մանուկը (ուխտատեղի՝ զհարաթ): Միայն մատուռներում և գերեզմանաձև շենքերում է լինում Թուխ Մանուկը, թե ծառոտ և ջրոտ տեղերում ևս՝ առանց մատուռի և շենքի: Հատկապես ի՞նչ նվերներ են տանում Թուխ Մանուկին: Ի՞նչ ավանդություններ կան ամեն մի տեղային Թուխ Մանուկի մասին»<sup>1</sup>:

Թեև հարցաշարը ծավալուն չէ, այն կարևոր դեր կարող էր խաղալ Թուխ Մանուկներն ուսումնասիրելու համար, սակայն ոչ մի հետազոտող չի գնացել Խալաթյանցի ցույց տված ճանապարհով: Մինչդեռ Խալաթյանցի հարցաշարը նախատեսված է առաջին հերթին սրբավայրերի և դրանց շուրջ եղած ծեսերի, սովորույթների, ավանդությունների ուսումնասիրության համար՝ յուրաքանչյուր Թուխ Մանուկի տեղային առանձնահատկությունների դուրսբերումով: Խալաթյանցի հարցաշարից պարզ է, որ նրան հայտնի էին Թուխ Մանուկների ոչ միայն մատուռ կամ շենք, այլ հաճախ՝ բնական օբյեկտ լինելը, ինչը շատ կարևոր է, քանի որ հետագա հետազոտողների ուսումնասիրությունները եթե անգամ առնչվում են սրբավայրերին, ապա անդրադառնում են հենց մատուռ կամ շենք ունեցող Թուխ Մանուկներին, ինչը հանգեցնում է թյուր հետևությունների:

### **Գարեգին եպս. Սրվանձոյանցի կարծիքի դիտարկումը**

Սրվանձոյանցի կարծիքը կարելի է բաժանել երկու հիմնական կետերի: Առաջին մասում ներկայացվում են Թուխ Մանուկ սրբավայրերի մի քանի տեսակները՝ գրեթե բոլոր գյուղերում կան Թուխ Մանուկ սրբավայրեր և դրանք շատ փոքր մատուռներ, գերեզմանաձև շենքեր, ամբողջական կամ կոտրած խաչքարեր են: Թուխ Մանուկներից շատերը դար-

<sup>1</sup> **Գր. Խալաթյանց**, Ծրագիր հայ ազգագրության եւ ազգային իրաւաբանական սովորութիւնների, տպ. Օ. Օ. Հերբէկ, Մոսկվա, 1887, էջ 31:

ծել են եկեղեցիներ: Դրանց ուխտ են գնում բարեպաշտ կանայք և հիվանդները: Այսինքն առաջին մասը վերաբերում է սրբավայրերին:

Սրվանձոտյանցի այս տեղեկությունները հետազայում լայնորեն ներկայացնում են Ա. Տևկանցը<sup>1</sup>, Կ. Մկրտչյան Մշեցին<sup>2</sup>, Ս. Հայկունին<sup>3</sup>, Գ. Շերենցը<sup>4</sup>, Ե. Լալայանը<sup>5</sup>, Բենսեն<sup>6</sup>, Մ. Միրախորյանը<sup>7</sup>, Ե. Մելիքյանը<sup>8</sup>, Թ. Թորամանյանը<sup>9</sup> և ուրիշները Պատմական Հայաստանի բազմաթիվ գավառների վերաբերյալ:

Մ. Մկրտչյանը ոչ միայն հաստատում է Սրվանձոտյանցի հայտնած տեղեկությունները, այլև հավելում է Թուխ Մանուկ սրբավայրերի ևս մի քանի տեսակ՝ փոքրիկ շենքեր և սուրբ ծառ ու աղբյուր: Թուխ Մանուկի տնակներն այնքան փոքր էին, որ մարդ չէր կարող ներս մտնել, այլ դրսից, դռնակի միջով, ներսում դրվում էին մոմերն ու վառած ճրագները: Ներսում ծխից ամբողջովին սևացած հորիզոնական քար էր դրված, որի վրա շատ հաճաղ ուղղահայաց կանգնեցված էր խաչքար: Ժողովուրդը, հատկապես կանայք, իրենց հիվանդությունները բուժելու հույսով ուխտի էին գնում այդտեղ: Որպես նվեր բերում էին խունկ, մոմ, ձեթ, կտավատի

<sup>1</sup> Ա. Տևկանց, Այցելություն ի Հայաստան, 1878 թ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985, էջ 50, 53, 71, 74-75, 122:

<sup>2</sup> Մկրտչեան Մշեցի, Տարօն, «Արարատ», գ. 5, 1881, էջ 236:

<sup>3</sup> Ս. Հայկունի, Բագրեանդ Ջրաբաշխ գաւառ, Վաղարշապատ, Ս. Էջմիածին, 1894, էջ 197, 326, 358:

<sup>4</sup> Գ. Շերենց, Սրբավայրեր, Տեղագրութիւն Վասպուրականի-Վանայ նահանգի գլխաւոր եկեղեաց, Վանօրէից և ուսումնասիրանաց, Թիֆլիս, «Վերիչև և Կամենմախէր» ընկ. տպ., 1902, էջ 31, 42, 85:

<sup>5</sup> Ե. Լալայեան, Վասպուրական. Հավատք, «Ազգագրական հանդէս», XXV, 2, Թիֆլիս, 1913, էջ 54-55; Վասպուրական. Հավատք, «Ազգագրական հանդէս», XXVI, Թիֆլիս, 1916, էջ 198:

<sup>6</sup> Բենսէ, Բուլանըխ կամ Հարք գաւառ, Հավատք, «Ազգագրական Հանդէս», գ. 2., Թիֆլիս, 1900, էջ 25-26:

<sup>7</sup> Մ. Միրախորեան, Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի, Կ. Պոլիս, Ս. Պարտիզպանեանի տպ., 1885, մասն Բ., էջ 98, 128, 167, մասն Գ., էջ 48, 82, 125:

<sup>8</sup> Ե. Յ. Մելիքեան, Հարք-Խնուս, Անթիլիաս, 1964, էջ 54, 86, 105, 123:

<sup>9</sup> Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Աշխատությունների ժողովածու երկու հատորով, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, հ. 1, էջ 70, հ. 2, էջ 237, 264-266, 288, 293:

յուղ և դրամ, որոնք պատկանում էին Թուփա Մանուկի տիրոջը, քանի որ շատ Թուփա Մանուկներ գտնվում էին անհատական այգիների մեջ կամ տներին կից: Իսկ սուրբ ծառեր և աղբյուրներ կային ամեն տեղ<sup>1</sup>:

Թուփա Մանուկների մասին տեղեկությունները գրեթե իսպառ վերանում են խորհրդային կարգերի ժամանակ: Բացառություն է թերևս Ս. Խանզադյանի «Հայրենապատում» չորսհատորյա աշխատությունը, որի երեք հատորների մեջ շուրջ մեկ տասնյակ Թուփա Մանուկ սրբավայրեր են հիշատակվում<sup>2</sup>:

Խորհրդային տարիներին նաև լույս է տեսնում Ա. Մնացականյանի «Թուփա Մանուկ հուշարձանների մասին» հոդվածը, որը մինչ օրս արդիական է, սակայն այս հոդվածում քննվում են Թուփա Մանուկ սրբավայրերի մասին միայն նախորդ դարի ազգագրական տվյալները, այն էլ ոչ ամբողջությամբ:

Մեր դաշտային աշխատանքների տվյալներով ՀՀ ներկայումս գոյություն ունեն շուրջ 200 Թուփա Մանուկ սրբավայրեր: Դրանք շատ տարբեր են իրենց կառուցվածքով, կարող են լինել մատուռներ, ժայռեր, անձավներ, խաչքարեր, աղբյուրներ, ծառեր, քարակույտեր, տապանաքարեր, ավետարաններ և այլն: Գարեգին եպս. Սրվանձոյանցից մինչև մեր օրերը փոխվել է միայն այդ սրբավայրեր այցելողների սեռատարիքային կազմը: Եթե մինչև խորհրդային կարգեր նշվում է, որ դրանք հիմնականում այցելում էին բարեպաշտ կանայք և հիվանդները, ապա այժմ այցելում են բոլորը, առանց տարիքային և սեռական տարբերության:

Սրվանձոյանցը իր կարծիքի երկրորդ մասում հայտնում է Թուփա Մանուկ սրբավայրերի առաջացման մասին իր տեսակետը, որը, ըստ նրա, երկու հավանական տարբերակ ունի: Ա. Թուփա Մանուկները առաջացել են բարբարոսների կողմից ավերված եկեղեցիների տեղերում, որոնք մնացել են հիշողության մեջ և դրանց տեղը, հողը և քարը նվիրական են դարձել: Բ. Դարերի ընթացքում սուրբ հավատքի համար նահատակվածների արյան կամ թաղման տեղերն են այդ սրբավայրերը: Իսկ եթե անվանը հետևենք, ապա հավանաբար նրանք մանուկներ են՝ մորթված քրիստոնյա լինելու համար իրենց մայրերի գրկի մեջ, իսկ «թուփա»-ը լերդացած արյունն է: Այս ամենի մասին չկա հատուկ պատմություն, բայց

<sup>1</sup> Մ. Մկրեան, Խունձկուրլու ու Թուփա-մանուկներ, «Բիրական», 1898, էջ 411-412:

<sup>2</sup> Ս. Խանզադյան, Հայրենապատում, հ. 1-3, Երևան, «Հայաստան», 1980-1984:

կա հատուկ շարական<sup>1</sup>: Այսինքն երկրորդ մասն ավելի շատ վերաբերում է Թուխ Մանուկի կերպարին:

Հայկական նյութի հետագա հավաքողները՝ Մ. Միրախորյան, Գ. Շերենց, Վահան վարդ. Տեր-Մինասյան, Քաջբերունի, Մկրտիչ արք. Սմբատյանց, Ս. Հայկունի, Ե. Լալայան, Թ. Թորամանյան և ուրիշներ Սրվանձտյանցի նման ծավալուն կարծիք չեն հայտնել, թեև նրանցից մի քանիսը մեկ-երկու տողով հայտնել են իրենց կարծիքը:

Գարեգին եպս. Սրվանձտյանցի կարծիքի երկրորդ մասին հետագա գրանցողներից ու ուսումնասիրողներից առավել մոտ են. «Լումայ»-ում լոյս տեսած «Մշոյ աշխարհ» ծավալուն հոդվածի տեղեկությունը<sup>2</sup>, Մ. Մկրտչյանի<sup>3</sup> և Մկրտիչ արք. Սմբատյանցի<sup>4</sup> կարծիքները: Թուխ Մանուկներին որպես անանուն կամ նորահայտ նահատակ սրբի գերեզման են համա-

<sup>1</sup> Սրվանձտյանցի նշված շարականը պատկանում է Ս. Ներսես Շնորհալի կաթողիկոսի գրչին և Հայ Առաքելական Եկեղեցու Արևագալի ժամերգության (Հայ Եկեղեցու ինը ժամերգություններից երրորդն է, որ այժմ Մեծ Պահքի ընթացքում է կատարվում) մասն է կազմում: Բերենք շարականն ամբողջությամբ.

**Ներսես Շնորհալի. Ճգնաւորք Աստուծոյ**

Ճգնաւորք Աստուծոյ, եւ ժառանգորդք երկնից արքայութեանն, որք փոխանակեալք զանցաւորս առիք զանանցն բարութիւնսն. բարեխօսեցէք առ Տէր վասն մանկանց եկեղեցոյ:

Նահատակք պանծալիք, և սիրեցեալք ի յերկնաւոր Հօրէն, որք մկրտեցայք ընդ Քրիստոսի արեամբ ձերով ի մահ խաչին. բարեխօսեցէք առ Տէր վասն մանկանց եկեղեցոյ: Մարտիրոսք ցանկալիք, և օթեանք Հոգոյն ճշմարտութեանն, որք յաղթեցիք հոգով կարեաց և ցանկութեան. բարեխօսեցէք առ Տէր վասն մանկանց եկեղեցոյ:

Գովելիք աշխարհի, և բաղձալիք վերնոցն պետութեանց, որք երանութեան մասին հասիք քան զամենայն որդիս մարդկան. բարեխօսեցէք առ Տէր վասն մանկանց եկեղեցոյ: Կամաւոր պատարագք, մանկունք տիօք և կատարեալք իմաստութեամբ. որք փոխանակ կաթին՝ արբիք զգինին զմայլեցուցիչ. բարեխօսեցէք առ Տէր վասն մանկանց եկեղեցոյ:

**Ձայնքաղ շարական**, Յերուսաղէմ, տպ. Սրբոյ Յակովբեանց, 1884, էջ 419-420:

<sup>2</sup> «Մշո աշխարհում շատ կային Թուխ Մանուկ ուխտավայրեր, որոնք եկեղեցիներ ու եկեղեցու քաջ նահատակների գերեզմաններ էին», «Լումայ», Մշոյ աշխարհ, 1899, գ. Ա., էջ 108:

<sup>3</sup> «Ուխտավորներն ասում էին, որ Թուխ Մանուկները զորավոր սրբեր են կամ քրիստոնյա վկաների գերեզմաններ, ավելին չգիտեին», **Մկրեան**, նշվ. աշխ., էջ 411-412:

<sup>4</sup> **Մկրտիչ արք. Սմբատեանց Նախիջևանցի**, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, Ս. Էջմիածին, 1895, էջ 263:

րում Հ. Աճառյանն<sup>1</sup> ու Ս. Մալխասյանը<sup>2</sup>: Ժամանակակից ուսումնասիրողներից Սրվանձտյանցի կարծիքին որոշակիորեն հարում են Մեսրոպ արք. Աշճյանը և Հ. Խառատյան-Առաքելյանը<sup>3</sup>:

Առանձին պետք է նշել Պ. Պռոշյանի երկու ստեղծագործություններում՝ «Ցեցեր» վեպում և «Որսորդ Բաղդոն» պատմվածքում ներկայացված Աշտարակի Թուփա Մանուկ սրբավայրի (այժմ գոյություն չունի) մասին ավանդության երկու տարբերակը: Ահա այդ առասպելները.

Ա. «Մի արևկող այգու անկյունում այսօր էլ դեռ կանգնած է Հնձանաբազը: Այդ մի ավերակ է, որի գազազափ երկարությամբ քառանկյունի կոփածո քարերի երեսները ժամանակին մաշող զորությունից տեղ-տեղ խորդուբորդվել են: Ամենաքիչը 700-800 տ. հնության: Հնձանաբազը դարերով ոչ միայն աղամորդու ոտք չի մտել, արևն ու անձրևն էլ դժվար են թափանցել: Հինավուրց հաստաբուն թեղի ծառի խիտ և անխնամ ուտերն են հովանավորել ամբողջ ավերակի վրա, ծառը ճյուղերը վրանանման կռացրել է ավերակի վրա և փռել մինչև գետին: Թեղուն դիպչելը մեղք էր, թեղին Թուփա-մանուկի տնկածն էր. գյուղի երեխեն էլ գիտեր, որ թեղու ոչ մի ճեղքին դանակ, էտոց, կացին չպետք է դիպչեր, ապա թե ոչ արյուն դուրս կգար: Թեղին հենց ինքը Թուփա-մանուկն է, բարակ ուտերը Թուփա-մանուկի երակներն են, իսկ տերևները նորա գզգզված մազերն են: Թուփա-մանուկը մերձակա պարսկական գյուղի մոլլի որդին էր. նա քրիստոնյա էր դառել, նրա մոլեռանդ հայրը կամեցել է որդուն սպանել, հալածելով հասցրել է մինչև այս գյուղի Հնձանաբազը: Մանուկը տեսնում է, որ հայրը հասվեհաս է, խնդրել է Աստծուն, որ իրան ծառ շինի, հոր ձեռքից ազատի: Խնդիրը կատարվել է. մանուկի գզգզված մազերը ճղքներ են դարձել և մոլլի մտնելուն արգելք եղել: Կատաղած մոլլեն թրով տվել է ծառի մի ճյուղը քերծել: Այսօր էլ կտեսնես քերծված տեղում չո-

<sup>1</sup> «Թուփամանուկ – նոր յայտնուած կամ անանուն սուրբի գերեզման, որուն վրայ փոքրիկ տնակ մը կը շինուի՝ իբր ուխտատեղի», Հ. Աճառեան, Հայերէն գաւառական բառարան, Էմինեան ազգագրական ժողովածու, հատ. Թ., Թիֆլիս, 1913, էջ 377:

<sup>2</sup> «Թուփամանուկ – անանուն սրբի գերեզման, որի վրայ քարերով թեթև պատսպարանք են շինում և որին կանայք ուխտի են գնում», Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հ. 2, Երևան, ՀՍՍՌ պետ. հրատ., 1944, էջ 124:

<sup>3</sup> Մեսրոպ արք. Աշճյան, Թուփա Մանուկ, Նստաշրջանի նյութեր, խմբ. Ս. Հարությունյան, Երևան, «Հայաստան», 2001, էջ 18-19: Հ. Խառատյան-Առաքելյան, Հայ ժողովրդական տոներ, Երևան, «Ձանգակ-97», 2005, էջ 299-300:



րացած ու սևացած արյունը»<sup>1</sup>:

Բ. «Չորում, գետից հեռու, քարափների մեջ, ճրղքճրղքոտել էր Թուփ-Մանուկ թեղի ծառը: Չորս տղամարդ որ իրար հետ ձեռները պատ էին տալիս, գրկում, դեռ երկու թզաչափ էլ բաց էր մնում: Էս ծառը եթե տափարակ դաշտի վրա լիներ, իր շվաքի տակ հարյուր տնանոց մի գյուղ կտեղավորեր: Թեղի ծառը Թուփ-Մանուկի գերեզմանի վրա էր աճել: Թուփ-Մանուկն անհավատ առնախում թուրքի մոլլայի որդին էր: Մի օր մոլլի ձեռքը մի հայ տերտեր է ընկնում, ստիպում է տերտերին ծնկի իջնել և ուրանալ Քրիստոսին՝ եթե հրաժարվի հավատից, բաց կթողնի, եթե ոչ՝ կսպանի: Հոգևորականը մերժում է, այդժամ մոլլեն հրամայում է և տերտերի աջ ձեռքի մատի առաջին խաղից սկսած՝ խաղ առ խաղ ամբողջ մարմինը բութ դանակով հանել են: Տերտերը ոչ մի արտասուք չի թափել, միայն ծիծաղել է հիմարների վրա:

Մեռած տերտերի մարմինը մոլլեն շներին է տվել, որ ուտեն, ինչ էլ մնացել է հետո, գցել է տվել ձորը, որ գազանները լափեն: Բայց տերտերի մնացորդներին սկի ճանճերը չեն մոտեցել:

Տերտերի տանջամահը տեսել է մոլլի տղեն, որը գիշերը այդ պատճառով չէր կարողանում քնել: Մոլլի տղեն տեղից վեր է կենում և տեսնում, որ շուրջը ամեն ինչ մթության մեջ է, միայն ձորից լույս է երևում: Առաջ է գնում և տեսնում է, որ տերտերի մարմնի վրա կանաչ-կարմիր լույս է իջել է լուսավորել է շուրջը: Հանկարծ լույսի միջից մի ձայն է լսում, որ իրեն է կանչում (մոլլի տղի անունը Թուփ Մանուկ էր): Ձայնն ասում է, որ Թուփ Մանուկը բահ վերցնի և տերտերի մարմինը թաղի: Թաղելուց մի ձայն էլ է լսում, որ ասում է, թե տերտերի կողքն էլ իր համար գերեզմանի փորի, քանի որ վաղն ինքն էլ է նահատակվելու:

Առավոտը մոլլեն տղուն գտնում է տերտերի գերեզմանին նստած՝ աղթելիս: Մոլլեն աղաչանքով, հետո սպառնալով փորձում է տղին հեռացնել, բայց զուր՝ տղան միալար կրկնում է, որ ինքը քրիստոնյա է: Անաստված մոլլեն իր ձեռքով մի մեջ քարով ջախջախում է որդու գլուխը և հրամայում թաղել տերտերի կողքը՝ Թուփ Մանուկի փորած փոսում:

Թուփ Մանուկի և տերտերի գերեզմանների մեջտեղը դուրս է եկել և

<sup>1</sup> Պ. Պողոսյան, Տեցեր, Երկերի ժողովածու յոթ հատորով, հատ. 3, Երևան, Հայպետհրատ, 1963, էջ 403-404: Նաև Ե. Շահազիզ, Աշտարակի պատմությունը, Երևան, «Հայաստան», 1987, էջ 218-219:

շվաքին տվել թեղի ծառը: Էն օրվանից մինչ օրս ոչ մի թոչուն չի նստել թեղու վրա: Միայն մի ագռավ եկել ու իր ընկերի հետ բուն դրել էն ծառի կատարին: Էդ ագռավները սերնդեսերունդ բնակվել են իրենց պապերի շինած բնումը: Ոչ ամառն են հեռանում, ոչ ծմեռը՝ տարին 12 ամիս ղումսգում են տերտերի ու Թուխ Մանուկի գերեզմանի վրա: Այդ ագռավները Թուխ Մանուկինն էին, դրանց սերունդը հուր-հավիտենական պիտի մնա մինչև Քրիստոս դատաստան նստի, անհավատ մոլլի աչքերը էդ ագռավներին փորել տա, նոր հրամայի դժոխքը գցեն»<sup>1</sup>:

Միևնույն սրբավայրի մասին առասպելի տարբերակների մանրամասները բավական տարբեր են, սակայն նույնն է հերոսը՝ Թուխ Մանուկը, թեղի ծառը և հերոսին սպանելու պատճառը: Այս առասպելի երկու տարբերակներում էլ Թուխ Մանուկը քրիստոնեություն ընդունած և այդ պատճառով նահատակված այլազգի պատանի է: Այսինքն համապատասխանում է Սրվանձտյանցի կարծիքի երկրորդ մասին և «մանուկ» իմաստի բացատրությանը: Սակայն առասպելի առաջին տարբերակում կա նաև Սրվանձտյանցի «թուխ» իմաստին տրված բացատրության հաստատումը: Ըստ առասպելի. «Կատաղած մոլլեն թրով տվել է ծառի մի ճյուղքը քերծել: Այսօր էլ կտեսնես քերծված տեղում չորացած ու սևացած արյունը»՝ ամբողջովի համապատասխանում է Սրվանձտյանցի «թուխ-լերդացած արյուն» բացատրությանը:

Բուլանըխի Թուխ Մանուկի մասին ավանդությունում, որը գրանցել է Բենսեն, նույնպես պատմվում է քրիստոնեություն ընդունած և այդ պատճառով նահատակված այլազգի պատանիի մասին<sup>2</sup>:

Մեր կատարած դաշտային աշխատանքների ընթացքում նույնպես գրանցվել են մի քանի նման պատմություններ՝ Առինջ, Հացաշեն, Մեղրածոր՝ Թեթառույքի վանք, Գեղիովիտ<sup>3</sup>: Պետք է նշել, որ, թեև ՀՀ-ում հայտնի են շուրջ 200 Թուխ Մանուկ սրբավայրեր, բուն բանահյուսական

<sup>1</sup> Պ. Պոռշեանց, Որսորդ Բաղդոն, «Արաքս», գ. Ա, Ս.-Պետերբուրգ, 1894-1895, էջ 102-104:

<sup>2</sup> Բենսե, նշվ. աշխ., էջ 25-26:

<sup>3</sup> Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան, Դաշտային ազգագրական նյութ (հետազայում՝ ԴԱՆ), Կոտայք, Առինջ, 2015: Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան, ԴԱՆ, Արագածոտն, Թալին-Հացաշեն, 2015: Գ. Հակոբյան, ԴԱՆ, Կոտայք, Մեղրածոր, 2011: Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան, ԴԱՆ, Գեղարքունիք, Գեղիովիտ, 2013:

Նյութ շատ քիչ է հաջողվել գրանցել՝ մոտ մեկ տասնյակ սրբավայրի դեպքում, ուստի այս չորս տարբերակը մեծ թիվ է կազմում:

### Եզրակացություն

Հակիրճ ձևակերպելով, ըստ Գարեգին եպս. Սրվանձտյանցի՝ Թուխ Մանուկ սրբավայրերը տարատեսակ շինություններ և օբյեկտներ են՝ առաջացած նվիրական վայրերում, իսկ Թուխ Մանուկը որպես կերպար՝ հանուն քրիստոնեական հավատքի նահատակված պատանիներն են:

Գարեգին եպս. Սրվանձտյանցի՝ Թուխ Մանուկ սրբավայրերի մասին կարծիքը ամբողջովին հիմնված է իր տեսածի և լսածի վրա և հայրենի երկրի գիտակի տեսանկյունն է: Այսինքն երևույթը նա դիտարկել է «ներսից», որպես կրող և կարողացել է բացել Թուխ Մանուկ սրբավայրերի և որոշ առումով նաև կերպարի էությունը:

Իր այս մոտեցմանը հետևել են հայ հետազա բոլոր ազգագրագետները, ընդհուպ մինչև սովետական կարգերը:

Մենք ևս փորձել ենք հնարավորինս հետևել հայ ազգագրության և բանագիտության նահապետի մոտեցմանը, թեև որոշ դեպքերում կիրառել ենք նաև ժամանակակից գիտության ընձեռած հնարավորությունները:

Սրվանձտյանցից հետո, ինչպես նաև մեր կողմից գրանցված դաշտային նյութերի զգալի մասը հաստատում են նրա ներկայացրածի և կարծիքի ճշմարտացիությունը:

*Բանալի բառեր* – Թուխ Մանուկ, սրբավայր, նահատակ, ավանդություն, ուխտ, ազգագրություն

### СУЩНОСТЬ СВАТИЛИЩ ТУХ МАНУК ПО ГАРЕГИНУ ЕПИСКОПУ СРВАНДЗТЯНЦУ

*Карен Оганнисян*

*Ключевые слова:* Тух Манук, святилище, мученик, легенда, паломничество, этнография

Автором первого мнения о святилищах Тух Манук является основоположник армянской этнографии и фольклористики епископ Гарегин Срвандзтянц. Согласно его материалам святилища Тух Манук есть практически везде. Это

маленькие матуры (часовни), хачкары (крест-камни) – целые или разбитые или здание в виде могилы, где зажигают свечи и воскуряют ладан и куда ходят женщины и страждущие. По мнению епископа Срвандзтянца Тух Манук – это либо заветные места разрушенных святых церквей, либо же места смерти или погребения мучеников за святую веру. О последнем свидетельствует название Тух Манук – юноши, зарезанные в объятиях матерей, за христианскую веру, а «тух» - это цвет свернувшейся крови.

Многие из вдохновленных епископом Срвандзтянцем его последователей-собирателей армянской народной культуры фиксировали те же данные о святилищах Тух Манук, что и сам епископ Срвандзтянц.

Многие наши данные о свыше 200 святилищах Тух Манук на территории Республики Армения подтверждают данные и высказанное мнение епископа Срвандзтянца.

### THE ESSENCE OF TUKH MANOOK SHRINES BY GAREGIN BISHOP SRVANDZTYANC

*Karen Hovhannisyan*

**Key words:** *Tukh Manook, shrine, martyr, legend, pilgrimage, ethnography*

The author of the first opinion about the Tukh Manook shrines is the founder of Armenian ethnography and folklore, Bishop Garegin Srvandztyants. According to his materials, the Tukh Manuk sanctuary is almost everywhere. These are small maturs (chapels), khachkars (cross-stones) - whole or broken, or a building in the form of a grave, where candles and incense are lit and where women and sufferings go. According to Bishop Srvandztyants, Tukh Manuk are either the cherished places of the destroyed holy churches, or the places of death or burial of martyrs for the holy faith. The latter is evidenced by the name Tukh Manuk - young men, stabbed to death in the arms of their mothers, for the Christian faith, and "tukh" is the color of coagulated blood.

Many of Bishop Srvandztyants' followers and collectors of Armenian folk culture, inspired by Bishop Srvandztyants, recorded the same data about Tukh Manuk sanctuaries as Bishop Srvandztyants himself.

Many of our data on over 200 Tukh Manuk sanctuaries in the territory of the Republic of Armenia confirm the data and opinion of Bishop Srvandztyants.